

## 18 Նորագիրներ Միացան Հ.Յ.Դաշնակցութեան Շարքերին

«Վերաթարմանուն են մեր շարքերը եւ վերանորոգում է հայ ժողովրդին ծառայելու մեր ուխտը, երբ ամէն անգամ տեղի է ունենում Հ.Յ.Դաշնակցութեան շարքերն անցնելու երդման արարողութիւնը», իր շնորհաւորական ելոյթում յայտատարեց Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը, Ուրբաթ, Դեկտեմբերի 14ի երեկոյեան ժամը 7ին, Փասատինայի Հայ կենտրոնում կազմակերպուած երդման արարողութեան ընթացքում:

Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի դաստիարակչական յանձնախմբի պատասխանատու Անի Պէրպէրեանը բացուած յայտարարելով միջոցառումը, ուրախութիւն յայտնեց, որ Դաշնակցութեան օրուայ տօնակատարութեան նախօրեակին կազմակերպուած երդման սոյն արարողութեամբ, 18 նորագիրներ միանում են կազմակերպութեան շարքերին: «Անցնող ամիսներին նորագիր ընկերները մասնակցեցին դաստիարակչական աշխատանիստերի, համալրելով իրենց քաղաքական եւ կուսակցական տեղեկութիւններն ու գիտելիքները եւ այժմ պատրաստ են յանձնելու իրենց երդումը՝ Դաշնակցութեան շարքերին միանալու համար»: Այնուհետեւ ներկայացնելով նորագիրներին, բեմ հրաւիրեց օրուայ կնքահայր, վաստակաշատ դաշնակցական եղուարդ Մուշեղեանին՝ կատարելու երդման արարողութիւնը: Իր շնորհաւորական խօսքը ուղղելով նորագիրներին, կնքահայրը շեշտեց, որ «այսօրուայ երդման արարողութիւնից յետոյ, ձեզանից իւրաքանչիւրը դառնում է հայ ժողովրդի ծառան եւ Հ.Յ.Դ.ի զինուոր»:

Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի կազմակերպութեան շարքերն անցնող 18 նորագիրները Դաշնակցութեան դրօշի եւ ծրագրի առջեւ կատարեցին իրենց երդումը՝ ծառայելու Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին: Այնուհետեւ շնորհաւորական խօսքով ելոյթ ունեցաւ Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իզմիրլեանը, որը բարի գալուստ մաղթելով նորագիրներին, անդրադարձաւ ազատ, անկախ, միացեալ, ժողովրդավար ու ընկերային արդար կարգավիճակով Հայաստան կերտելու Դաշնակցութեան գերագոյն նպատակին եւ դիտել տուեց, որ Հայաստանում, Արցախում, Ջաւախքում եւ աշխարհի ցանկացած վայրում ծառայող դաշնակցականների գործունէութիւնը նոյնանում է այդ նպատակի իրագործման գաղափարախօսութեամբ: Աւետիք Իզմիրլեանը վստահութիւն յայտնեց, որ նորագիրները, հաւատարիմ իրենց երդման, որեւէ ջանք չեն խնայի Դաշնակցութեան ազգային ազատագրական գաղափարախօսութեանը իրենց նպաստը բերելու խնդրում:

Աւարտին, իր շնորհաւորական խօսքում, դոկտ. Վիգէն Յովսէփեանը նորագիր ընկերներին յիշեցրեց դաշնակցական շարքերի առանցքը հանդիսացող կարգապահութիւնը եւ ընդհանուր ժողովներով որոշումներ կայացնելու եւ գործադրելու կարեւորութիւնը:

Երդման արարողութեանը հետեւեց Հ.Յ.Դ. օրուայ խրախճանքը, որի անակնկալը հանդիսացաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի նախագահական թեկնածու Վահան Յովհաննիսեանի ներկայութիւնը սոյն խրախճանքին: Վահան Յովհաննիսեանը Լոս Անճելըսի օդակայանը

Ժամանակուց յետոյ, տեղեկանալով խրախճանքի մասին, ցանկութիւն էր յայտնել մասնակցելու եւ տօնական բարձր տրամադրութիւնը կիսելու նորագիրների հետ: Խրախճանքը խանդավառուեց ժողովրդական, ազգային եւ յեղափոխական երգերով, որոնք կատարեցին Վաչէ Յակոբեանը եւ Գառնիկ Սարգիսեանը: Իսկ վերջինիս հրաւերով բեմ բարձրացաւ նաեւ «Ալէք Փիլիպոս» ազգային վարժարանի տնօրէն դոկտ. Վիգէն Եագուպեանը, որը յեղափոխական երգերի անգլագական մեկնաբան Գառնիկ Սարգսեանի հետ խանդավառեց երեկոն, երգելով յեղափոխական երգեր: Խրախճանքը տեւեց մինչեւ առաւօտեան ժամը երկուսը: